

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ
Գլխավէնտ, Օհայօ

19 Սեպտ. 1982

Գեր Չ. Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, Առաջնորդ,
Առաջնորդարան Հայոց,
Ի Նիւ Եորկ, Ն.Ե.,

Սիրելի Սրբազան Հայր,

Յուսամ վերջին պահուն գրուած այս նամակը ձեր ձեռքը կը հասնի եւ
դուք անոր պարունակութեան վերահասու կ'ըլլաք նախ քան ձեր մեկնումը
դէպի Ս. Էջմիածին ձեր մասնակցութիւնը բերելու համար Ն.Ս. Օ.եան Գա-
հակաութեան եւ Ալէք Մանուկեան Թանգարանի բացման Հանդիսութեանց:

Կարճ ձեռով ներկայացնեմ հարցը: Եկեղեցւոյս բարերար եւ կնքահայր
ողբացեալ Տքթ. Գեղամ Կէօքճեանի ողջութեան խօսակցած էինք իրարու հետ
Ս. Գր. նարեկացի եկեղեցիս օժտելու համար Հայկական ռճով շինուած ոս-
կեզօծ սկիհով մը (մաղզմայով միասին) եւ Միւռօնթափ Աղաւնիով մը,
ի յիշատակ իրեզօր հանգուցեալ Յարութիւն Կէօքճեանի:

Այնուհետեւ ես գրած էի Սիոն Սրբազանին սոյն սրբազան սպասներու
մասին եւ իր գործակցութիւնը խնդրած էի անոնց ապալուման եղանակին եւ
ստացման կարելիութեան մասին: Վերաբերմամբ: Սիոն Սրբազան երբ վերջին
առիթով Ամերիկա այցելած էր ինծի ըսաւ որ Վեհափառը երկվեցեակ մը Սկիհ-
ներ շինել տուած է բայց միւռօնթափ Աղաւնին տակաւին պատրաստ չէ՝ նկատի
ունենալով այս վերջնոյս շինութեան աւելի բարձր հանգամանքը:

Մինչ այդ Տքթ. Կէօքճեան ի Տէր հանգած էր եւ ես պէտք է վերանորոգէի
խոստումը հանգուցեալին այրիին հետ խօսակցելով եւ իրեն պարզելով իր հան-
գուցեալ ամուսնոյն խոստումը եւ թէ արդեօք ինքը պատրաստ էր նման օրինակ
նուէր մը ընելու եկեղեցւոյս, նկատի առած անոր մօտաւորապէս հազար տոլարի
արժէքը: Ուրախ եմ ըսելու որ Տիկ. Ֆլորանս Կէօքճեան պատրաստակամութիւն
այստեց սիրայօժար կերպով իր հանգուցեալ ամուսնոյն փափաքը իրագործելու
եկեղեցիս օժտելու Հայկական ռճով շինուած ոսկեզօծ սկիհով մը, աւելցնելով որ
պինքը աւելի յարմար կը տեսնէր որ այդ նուէրը ըլլար իր եւ իր ընտանիքին
կողմէ յիշատակ Տքթ. Գեղամ Կէօքճեանի: Այսինքն իր եւ զաւակաց կողմէ
յիշատակ իրենց ամուսնոյն եւ հօր:

Արդ, նկատի ունենալով յիշատակի սոյն նուէրին սրբազան բնոյթը եւ համե-
մետական արժէքը, այն եզրակացութեան հասայ որ թերեւս աւելի յարմար պիտի
ըլլար ձեր միջոցաւ զայն ունենալ: Երբ այս վերջին առիթով վերստին անգամ
ըլլալով գտնուիք ի Ս. Էջմիածին: Հարցը իր եզրակացութեան հասցնելով,
առիթ պիտի ունենայիք եւ պիտի բարեհաճէիք ստանձնել անոր բարւօք կարգադ-
րութիւնը, ինչ ձեռով որ հարկ ըլլար զայն գլուխ հանել, վճարման՝ եղանակն
ալ ներառեալ, որպէս զի եկեղեցիս ապահովութեամբ Հայկական ռճով շինուած սոյն
թանկարժէք սրբազան առարկայով: Երախտապարտ կը մնանք:

Ներողութիւն անապարանքով գրուած ըլլալուն հետեւանքով սոյն նամակին
պատահական թերութեանց համար: Կանխայայտ շնորհակալութիւններ:

Խոնարհաբար, Տ. Տիրան Քէսյ
REV. FR. DIRAN PAPAIZIAN PASTOR

Յ. Գ. - Աւելցնեմ որ Սիոն Սրբազանին եւս նամակ մը գրեցի այսօր,
առ ի տեղեկութիւն, ըսելով որ ձեզի դիմած եմ հարցին
կարգադրութեան համար, եւ խնդրեցի որ իր աշակ-
արհեստագործութեան համար, ձեր
հարցը: